Կ-017[1]-05.06.2017-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է ազդարարման, ազդարարման կարգի, ազդարարի իրավունքների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների՝ ազդարարման հետ կապված պարտականությունների, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ազդարարում**՝ ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական հիմնարկներում և կազմակերպություններում, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում սույն օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմնին.

2) **ազդարար**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով սույն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի կամ մարմնի հետ, որի հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական հարաբերությունների մեջ, կամ ում դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ ով սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ ում հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ.

3) **ազդարարի հետ փոխկապակցված անձինք**՝ ազդարարի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները.

4) **իրավասու մարմին**՝ Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմին, պետական հիմնարկ և կազմակերպություն, հանրային նշանակության

կազմակերպություն, որը սույն օրենքով սահմանված երաշխիքների ապահովմամբ պարտավոր է ընթացք տալ ազդարարմանը.

5) **հանրային նշանակության կազմակերպություն**՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություն, որի աշխատողների թվաքանակը կամ հաստիքների քանակը գերազանցում է հիսունը.

6) **վնասակար գործողություն**՝ գործողություն կամ անգործություն, որով ազդարարման համար ազդարարին կամ նրա հետ փոխկապակցված անձին հասցվում է վնաս՝ լուծելով աշխատանքային պայմանագիրը կամ նրան ավելի ցածր պաշտոնի փոխադրելով կամ նրա հաստիքը կրճատելով կամ նրան աշխատանքային առաջադրանքներ չտրամադրելով կամ արհեստականորեն հանձնարարականներով կամ առաջադրանքներով ծանրաբեռնելով, կամ նրա աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտելով, կամ նրա նկատմամբ խրախուսանքի միջոցների կիրառումը մերժելով, կամ նրա աշխատավարձը կամ պարգևավճարները կրճատելով, կամ նրա գույքին վնաս պատճառելով, կամ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելով, կամ նրան պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկելով, որը կվատթարացնի նրա գույքային դրությունը կամ չի արդարացնի գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները կամ ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցներ կիրառելով.

7) **կոռուպցիոն բնույթի դեպքեր**՝ պաշտոնի օգտագործմամբ կատարված իրավախախտումներ.

8) **հանրային շահերին ուղղված այլ վնաս**՝ հանրային առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնաս, պետության միջոցների կամ գույքի վատնում, ինչպես նաև այլ վնաս, որը պատճառվել է հասարակական կամ պետական կառավարման կարգին:

Հոդված 3. Ազդարարման նպատակները

1. Ազդարարման նպատակներն են՝

1) բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները.

2) նվազեցնել և կանխարգելել կոռուպցիան.

3) նպաստել կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 2

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 4. Ազդարարման տեսակները

1. Ազդարարման տեսակներն են՝

1) ներքին ազդարարում,

2) արտաքին ազդարարում,

2. Ներքին ազդարարում է համարվում հաղորդման ներկայացումն իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձին կամ իրավասու մարմնի ղեկավարի կողմից լիազորված անձին:

3. Արտաքին ազդարարում է համարվում հաղորդման ներկայացումը իրավասու մարմնին:

Հոդված 5. Ազդարարման ընթացակարգը

1. Ներքին և արտաքին ազդարարումն իրականացվում է սույն օրենքի 3-րդ և 4-րդ գլուխներով սահմանված կարգով:

2. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Իրավասու մարմինն ինքնուրույն է սահմանում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարի տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը՝ որպես նվազագույն պահանջներ դիտարկելով սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ակտն ընդունելու դեպքում իրավասու մարմինը պարտավոր է այն տեղադրել իր կայքէջում, կայքէջի բացակայության դեպքում՝ իր օգտին աշխատանք կատարող կամ իր կողմից մատուցվող ծառայություններից օգտվող յուրաքանչյուր անձի համար տեսանելի վայրում:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ակտը չընդունելու դեպքում կիրառելի է սույն հոդվածի 2-րդ մասում սահմանված որոշումը:

ԳԼՈՒԽ 3

ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 6. Ներքին ազդարարումը և ներքին ազդարարման վարույթը

1. Ներքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձին կամ իրավասու մարմնի ղեկավարի կողմից լիազորված անձին հաղորդման ներկայացմամբ:

2. Եթե հաղորդումը ստացել է ազդարարի անմիջական ղեկավարը կամ նրա վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձը կամ սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված անձը, ապա նա պարտավոր է հաղորդումն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա կողմից լիազորված անձին:

3. Իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը՝

1) ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.

2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է վարույթի հարուցումը.

3) ապահովում է հարուցված վարույթի գաղտնիությունը.

4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունը ստուգելու նպատակով.

5) իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունը ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազությանը.

6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.

7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.

9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնել պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

5. Ներքին ազդարարման նկատմամբ ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

6. Ներքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, ինչի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է:

7. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը սույն օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, ինչի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է ազդարարին:

8. Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, հաղորդումը ստացած անձը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության դատախազությանը:

ԳԼՈՒԽ 4

ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 7. Արտաքին ազդարարումը և արտաքին ազդարարման վարույթը

1. Արտաքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից իրավասու մարմնին հաղորդման ներկայացմամբ:

2. Եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի աշխատակցին, ազդարարումը կատարվում է իրավասու մարմնի ղեկավարին: Եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի ղեկավարին, այն ներկայացվում է իրավասու մարմնի վերադաս մարմնի ղեկավարին: Իրավասու մարմնի վերադաս մարմնի բացակայության դեպքում հաղորդումը ներկայացվում է համապատասխան մարմնի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողովին (առկայության դեպքում), իսկ բարձրաստիճան պաշտոնատար անձանց դեպքում՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում լիազոր մարմնին:

3. Իրավասու մարմինը՝

1) ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.

2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հարուցում է վարույթ.

3) ապահովում է վարույթի գաղտնիությունը.

4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունը ստուգելու նպատակով.

5) իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունը ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազությանը.

6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.

7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.

9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնել պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

5. Եթե հաղորդումը ներկայացվել է ոչ իրավասու մարմնին, ապա հաղորդում ստացած մարմինը եռօրյա ժամկետում այն վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով ազդարարին:

6. Արտաքին ազդարարում չի համարվում քրեական հետապնդման մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:

7. Եթե ազդարարը համաձայնություն չի տվել իր անձնական տվյալները բացահայտելու վերաբերյալ, մարմինը, որը ստացել է ազդարարի կողմից ներկայացված հաղորդումը և իրավասու չէ վարույթ հարուցել, պարտավոր է, մինչև հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելը, ստանալ ազդարարի նախնական համաձայնությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Ազդարարի համաձայնության բացակայության դեպքում հաղորդումն ուղարկվում է ըստ ենթակայության՝ առանց ազդարարի անձնական տվյալները բացահայտելու:

8. Արտաքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, ինչի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է:

9. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը սույն օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, իրավասու մարմինը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, ինչի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է ազդարարին:

10. Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության դատախազությանը:

Հոդված 8. Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը

1. Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի (այսուհետ՝ միասնական էլեկտրոնային հարթակ) միջոցով ազդարարը կարող է անանուն եղանակով հաղորդել տեղեկություններ հանցագործության մասին:

2. Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը:

3. Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարի անանունությունը երաշխավորվում է նրա համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) ծածկագրելու միջոցով:

4. Միասնական էլեկտրոնային հարթակն ապահովում է հասանելիություն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը:

5. Միասնական էլեկտրոնային հարթակը պետք է օժտված լինի հետադարձ կապի միջոցով անանուն հաղորդմանն առնչվող անհրաժեշտ տեղեկությունների և փաստերի հավաքագրման հնարավորությամբ:

6. Միասնական էլեկտրոնային հարթակը վարում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը:

7. Միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 9. Անանուն հաղորդումները և դրանց առանձնահատկությունները

1. Ազդարարը անանուն հաղորդումը ներկայացնում է այն միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրելու միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն իր իրավասության շրջանակներում ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում համապատասխան ակտի ընդունումը:

3. Հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հաղորդումը ստուգելու նպատակով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն այն վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:

5. Սույն օրենքի 7-րդ հոդվածի դրույթները տարածվում են անանուն հաղորդումների վրա այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են:

ԳԼՈՒԽ 5

ԱԶԴԱՐԱՐԻ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԴԱՐԱՐԻ ԲԱՐԵԽԻՂՃ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության իրավունքը

1. Ազդարարը սույն օրենքին համապատասխան ունի պաշտպանության իրավունք: Ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է դրա նկատմամբ:

2. Ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:

3. Ազդարարը, ով հաղորդում է ներկայացրել կամ ում հաղորդումն ուղարկվել է քրեական հետապնդման մարմիններին, ենթակա է պաշտպանության Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

4. Ցանկացած պայմանագիր կամ պայմանագրի դրույթ, որը միտված է անձին ազդարարման կամ ազդարարի պաշտպանության իրավունքից զրկելուն կամ այն սահմանափակելուն, առոչինչ է:

5. Ազդարարի հետ փոխկապակցված անձն ազդարարի պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունք ունի, եթե ողջամտորեն հիմնավորում է, որ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով իր դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ:

Հոդված 11. Ազդարարի անձնական տվյալների պաշտպանությունը անանուն հաղորդում ներկայացնելիս

1. Անանուն հաղորդում ներկայացնելիս երաշխավորվում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը ինչպես իրավասու մարմնին, այնպես էլ այլ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարը բացահայտում է իր անձնական տվյալները:

2. Իրավասու մարմինն իրավունք չունի միջոցնել ձեռնարկել անանուն հաղորդում ներկայացրած ազդարարի անձնական տվյալները բացահայտելու ուղղությամբ:

Հոդված 12. Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանությունը

1. Ազդարարը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք:

2. Ազդարարի հետ փոխկապակցված անձը, որի դեմ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք:

3. Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 13. Ազդարարի բարեխիղճ գործելու պարտականությունը

1. Ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր, նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը:

2. Ազդարարը գործում է անբարեխղճորեն, եթե՝

1) բացակայում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ բարեխղճորեն գործելու հատկանիշները կամ

2) ազդարարումը կատարվել է ապօրինի եղանակով, այդ թվում՝ հանցագործության կատարմամբ կամ մարդու սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռքբերված տեղեկությունների հիման վրա, կամ

3) իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն, կամ

4) այլ անձին վնաս պատճառելու նպատակով դիտավորությամբ հաղորդում է կեղծ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 14. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է 2018 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 15. Միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծումը

1. Անանուն հաղորդումների ընդունման միասնական էլեկտրոնային հարթակը ենթակա է ստեղծման սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ», «ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ», ‹‹ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ‹‹ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ‹‹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ‹‹ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ‹‹ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ‹‹ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ‹‹ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՕՊԵՐԱՏԻՎ - ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋԱՐԿԻ (ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԼՐԱՑՄԱՆ) ՀԵՂԻՆԱԿԸ.	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԼՐԱՑՈՒՄԸ).	ԱՌԱՋԱՐԿԸ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԼՐԱՑՈՒՄԸ).	ԱՌԱՋԱՐԿԸ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԼՐԱՑՈՒՄԸ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	1. լրացնել ‹‹անդամներին վերաբերող պահանջներն» բառերով 2. հանել ‹‹գործընթացի» բառը	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Հանել հետ հետևյալ նախադասությունը. ‹‹Հանձնաժողովն ունի կնիք, դրոշմակնիք, ձեւաթուղթ եւ անհատականացման այլ միջոցներ: Հանձնաժողովի կնիքի վրա պատկերված են Հայաստանի Հանրապետության զինանշանը եւ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերը:»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մաս	Հանել ‹‹տնօրինել» բառը	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մաս	Շարադրել հետևյալ խմբագրությամբ.‹‹ 3. Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Հանձնաժողովն իր նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով: :»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մաս	Շարադրել հետևյալ խմբագրությամբ.‹‹ Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հանձնաժողովի անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և սույն օրենքի 10-15-րդ հոդվածներով սահմանված կարգով նշանակվում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով:»	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

‹‹Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մաս	«այդ կրթությամբ» և «մասնագիտական» բառերը հանել:	Ընդունվել է մասնակի: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
‹‹Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մաս	«Հանրային խորուրդի կողմից» բառերից հետո լրացնել «, խորհրդարանական ընդդիմության կողմից» բառերը:	Ընդունվել է: Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ:‹‹ Խորհուրդը կազմված է Մարդու իրավունքների պաշտպանի, Փաստաբանների պալատի, Սահմանադրական դատարանի նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների և Հանրային խորհրդի կողմից նշանակված մեկական անդամներից: Ազգային Ժողովի ընդդիմադիր խմբակցությունների

			կողմից խորհրդի անդամը նշանակվում է համախոհությամբ (կոնսենսուսով):»:
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մաս	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹Թեստերը կազմում է Խորհուրդը: Թեստերում ընդգրկված հարցերի բնագավառների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև թեստերի նմուշը ոչ ուշ, քան թեստավորումից 10 օր առաջ հրապարակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդված 1-ին մաս	‹‹3» թվից հետո ավելացնել ‹‹աշխատանքային» բառը	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդված 1-ին մաս	Լրացնել հետևյալ բովանդակությամբ ‹‹, բացառությամբ Հանձնաժողովի առաջին կազմի՝ չորս տարի ժամկետով նշանակված անդամների, որոնց լիազորությունների ժամկետը լրանում է նրանց նշանակման օրվան հաջորդող չորրորդ տարվա նույն օրը: » բառերով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդված	Ամբողջ հոդվածում ‹‹կարգ» բառը՝ համապատասխան հոլովաձևերով փոխարինել ‹‹աշխատակարգ» բառի համապատասխան հոլովաձևերով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նածագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասություն	‹‹Որոշմամբ» բառից առաջ լրացնել ‹‹պատճառաբանված» բառը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նածագծի 21-րդ հոդվածի 8-րդ մաս	‹‹Առաջարկություն »բառից հետո լրացնել՝ Հանձնաժողովի որոշմամբ: բառերը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 15-րդ մաս	‹‹Նորմատիվ» բառից առաջ լրացնել ‹‹ենթաօրենսդրական» բառը	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և նախագծի այլ հատվածներում	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց, բացառությամբ՝ պատգամավորների, դատավորների և դատախազների, էթիկայի կանոնների, իրավիճակային շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը.»	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի	Շարադրել հետևյալ խմբագրությամբ.‹‹ 2. Հայտարարագրերի վերլուծության գործընթացում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, Կենտրոնական դեպոզիտարիայից և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք	Նախագծում կատարվել է համապատասխան

	նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ մասեր	ունեցող այլ անձանցից, վարկային բյուրոներից պահանջել (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ գտնվող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր և ստանալ դրանք, բացառությամբ՝ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի: 3. Տեղեկությունները և փաստաթղթերը Հանձնաժողովին տրամադրում են անվճար՝ հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը պահանջը կատարելու համար այլ ողջամիտ ժամկետ չի առաջարկում, որը չի կարող գերազանցել 30 օրը: Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց, ինչպես նաև վարկային բյուրոների կողմից տեղեկություններն ու փաստաթղթերը տրամադրվում է անվճար՝ Հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի ներկայացրած հայտարարագրերի թվին հավասար թվով հարցումներ ներկայացվելու դեպքում: 4. Հայտարարագրերի վերլուծության գործընթացում ապահովվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասում նշված կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված տեղեկատվական բազաների հետ Հանձնաժողովի տեղեկատվական բազայի փոխգործարկելիությունը և հայտարարագրման ենթակա տվյալներին Հանձնաժողովի առցանց հասանելիությունը:»:	փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 25-րդ հոդված	Հաշվի առնելով հոդվածում կատարված փոփոխությունները՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել ‹‹Արժեթղթերի շուկայի մասին»,«Բանկային գաղտնիքի մասին» ,«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքներում	Նախագծերի փաթեթը համապատասխանաբար լրացվել է ‹‹Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում

			կատարելու մասին»,«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծերով, որոնք ուժի մեջ կմտնեն 2018 թվականի ապրիլի 10-ից:
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մաս	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹Դիմումը վերադարձնելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին Հանձնաժողովն ընդունում է որոշում դիմումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ.‹‹ Հանձնաժողովը վարույթ հարուցելու մասին որոշումն ընդունում է դիմումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

	հոդվածի 1-ին մաս		
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 4-րդ մաս	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹Վարույթի շրջանակում Հանձնաժողովն իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ կազմակերպություններից պահանջել և ստանալ Հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն, բացառությամբ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների, ինչպես նաև իր կողմից բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել անցկացնել անվճար ուսումնասիրություններ, կատարել անվճար փորձաքննություններ և ներկայացնել դրանց արդյունքները:»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի 42-րդ հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹ 1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի կողմից Հանձնաժողովի առնվազն 3 անդամներին նշանակելվուց հետո: 2. Սույն օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2018 թվականի ապրիլի 10-ից: 3. Սույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված մրցույթն առաջին անգամ անց է կացվում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 45 օրվա ընթացքում: 4. Ազգային ժողովը Հանձնաժողովի առաջին կազմի երեք անդամների նշանակում է վեց, իսկ երկու անդամների՝ չորս տարի ժամկետով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր թեկնածուի համար Խորհրդի ներկայացրած պաշտոնավարման ժամկետները: 5. Հանձնաժողովի կազմավորման պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ գլուխը, բացառությամբ 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի:»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի	‹‹Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹5) հանրային նշանակության կազմակերպություն՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություն, որի աշխատողների	Նախագծում կատարվել է համապատասխան

հեղինակ	նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետ	թվաքանակը կամ հաստիքների քանակը գերազանցում է հիսունը»:	փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 222[4] հոդված	‹‹եռօրյա» բառը փոխարինել ‹‹հնգօրյա» բառով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ հոդվածով.‹‹ … Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով. «3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, հրապարակում է հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կայքէջում: Ըստ քննչական ենթակայության՝ հաղորդումը պետք է պարունակի տեղեկություններ նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, վիճակագրական տվյալները, համեմատական վերլուծությունները և եզրահանգումները ներկայացվում են առանձին: 4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հաղորդումը կազմելու համար նախաքննության մարմինները, ըստ քննչական ենթակայության, յուրաքանչյուր	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

		տարի՝ մինչև փետրվարի 1-ը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն են ներկայացնում նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ և վիճակագրական տվյալներ: Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների ներկայացման մեթոդական ուղեցույցը հաստատում է գլխավոր դատախազը:»:	
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին, 7-րդ, 15-րդ հոդվածներ	Նախատեսել կարգավորումներ շահերի հայտարարագրման վերաբերյալ:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 33-րդ հոդված	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. ‹‹2. Եթե հայտարարատու պաշտոնատար անձն իր լիազորությունների դադարումից (դադարեցումից) հետո 15 օրվա ընթացքում նշանակվում (ընտրվում) է սույն օրենքին համապատասխան հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոնում, ապա նա պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու և ստանձնելու օրվա դրությամբ հայտարարագիր չի ներկայացնում:»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի	‹‹Հանրային	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹3. Հայտարարագրերի վերլուծության	Նախագծում

փաթեթի հեղինակ	ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 13-րդ հոդվածով լրացվող 43.1-ին հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր	գործընթացում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, Կենտրոնական դեպոզիտարիայից և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանցից, վարկային բյուրոներից պահանջել (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ գտնվող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր և ստանալ դրանք, բացառությամբ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի: Տեղեկությունները և փաստաթղթերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին տրամադրում են անվճար՝ հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը պահանջը կատարելու համար այլ ողջամիտ ժամկետ չի առաջարկում, որը չի կարող գերազանցել 30 օրը: Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց, ինչպես նաև վարկային բյուրոների կողմից տեղեկություններն ու փաստաթղթերը տրամադրվում են անվճար՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի ներկայացրած հայտարարագրերի թվին հավասար թվով հարցումներ ներկայացվելու դեպքում: 4. Հայտարարագրերի վերլուծության գործընթացում ապահովվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի տեղեկատվական բազայի փոխգործարկելիությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, սույն հոդվածի 3-րդ մասում նշված կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված տեղեկատվական բազաների հետ և հայտարարագրման ենթակա տվյալներին հանձնաժողովի առցանց հասանելիությունը:»:	կատարվել է համապատասխան փոփոխություն

Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 13-րդ հոդվածով լրացվող 43.1-ին հոդված	Հաշվի առնելով հոդվածում կատարված փոփոխությունները՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել ‹‹Արժեթղթերի շուկայի մասին»,«Բանկային գաղտնիքի մասին» ,«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքներում:	Նախագծերի փաթեթը համապատասխանաբար լրացվել է ‹‹Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծերով, որոնք ուժի մեջ կմտնեն 2017 թվականի հուլիսի 1-ից:
Նախագծերի փաթեթի	‹‹Պետական պաշտոններ	‹‹10» տառը փոխարինել ‹‹12» տառով:	Նախագծում կատարվել է

հեղինակ	զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ ե և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված		համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	‹‹8» տառը փոխարինել ‹‹10» տառով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի	‹‹Կանխարգելման» բառից հետո հանել ‹‹հարց» բառը	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

	նախագծի 1-ին հոդված		
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ հոդվածով. ‹‹…Օրենսգրքի 311.2 -րդ հոդվածում՝ 1) վերնագրից «շահադիտական նպատակով» բառերը հանել. 2) 1-ին մասում «շահադիտական նպատակով» բառերը փոխարինել «շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով» բառերով, իսկ «միջնորդի միջոցով» բառերից հետո լրացնել «իր կամ այլ անձի համար» բառերը:»:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Հանել նախագծով լրացվող 166[1] հոդվածը	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 206[14] -րդ հոդվածով. «Հոդված 206[14] . Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին անհրաժեշտ տեղեկությունները կամ պահանջվող նյութերը չտրամադրելը 1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների եւ այլ կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին սահմանված ժամկետում պահանջվող նյութերը, փաստաթղթերը կամ այլ տեղեկությունները չտրամադրելը, բացառությամբ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների, քննարկվող հարցի	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

		ուսումնասիրման ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ անվճար ուսումնասիրություններ չանցկացնելը, եւ անվճար փորձաքննություններ չկատարելը եւ դրանց արդյունքները չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով:»:	
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ	‹‹Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել ‹‹Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով» բառերով և համապատասխան հոլովաձևերով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդված	‹‹2018 թվականի ապրիլի 10-ից» բառերը փոխարինել‹‹ 2017 թվականի հուլիսի 1-ից» բառերով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Նախագծերի փաթեթի հեղինակ	‹‹Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդված	‹‹Ենթակետ» բառը փոխարինել ‹‹կետ» բառով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն